«ԱՐՄԱՎԻՐ 1» ՎԿ

# ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՎՈՂ ՈՒՍՈՒՑՉԻ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման – **Ուսուցչի համագործակցությունը սովորողների ծնողների կամ նրանց օրինական ներկայացուցիչների հետ՝ սովորողների կրթության կազմակերպման և ընտանեկան հարցերում**


Հետազոտող ուսուցիչ՝ **Լամարա Կարապետյան**

Դպրոցը՝ - **Մայիսյանի միջնակարգ դպրոց**

Մենթոր ուսուցիչ՝ - **Արմինե Անտոնյան**


Արմավիր - 2023թ

«ԱՐՄԱՎԻՐ 1» ՎԿ

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ ..... 3

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ..... 7

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ ..... 7

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐԸ ..... 7

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ ..... 8

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ..... 15

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ ..... 16

# Ն Ե Ր Ա Ծ ՈՒ Թ Յ Ո Ւ Ն

«Մեզ անբավարար է թվում երեխաների մարմինը և հոգին թողնել այնպիսի վիճակում ինչպես դրանք տրված են բնության կողմից. մենք հոգում ենք նրանց դաստիարակության և ուսման մասին, որպեսզի լավը դառնա շատ ավելի լավ, իսկ վատը փոխվի և դառնա լավ»

***Լուկիանոս***

Կրթության և դաստիարակության ոլորտում տեղի ունեցող բարեփոխումները միտված են անհատի՝ 21-րդ դարին համահունչ, լիարժեք ձևավորմանն ու զարգացմանը:

Ժամանակակից աշխարհում «գլոբալացումը» ընդգրկում է բոլոր ոլորտները բերելով իր հետ «լավ և վատ» հետևանքները... Հարափոփոխ մեր կյանքում փոխվում են չափանիշները բոլոր բնագավառներում, փոխվում են մշակույթները: Սակայն բոլոր ժամանակներում հաստատուն է անհատի զարգացման մանկավարժական ճիշտ մոտեցումը, ինչն անհրաժեշտ է և՛ դպրոցում, և՛ ընտանիքում:

***Երջանիկ է այն երեխան, ով ապրում է լիարժեք ընտանիքում, ունի լավագույն ուուցիչ:*** Այս պարագայում դպրոցում դաստիարակության գործընթացի հիմնական օբյեկտը հենց սոցիալ-արժեքային հարաբերությունները կրող անձն է, անհատականություն, ով դեռևս մանկապարտեզից ազատ է և անկաշկանդ: Սակայն անձի ձևավորումը երկար ու դժվար ճանապարհ է պահանջում: Ուսուցչի խնդիրը ոչ միայն այսօրվա չափորոշչային պահանջներին համապատասխան գիտելիքների արժեքային համակարգի ստեղծումն է, այլև սանի մեջ անհատական որակների զարգացումը, վերջապես ամեն ինչում երեխայի հոգեբանական պատրաստվածությունն ու տրամադրվածությունն ապահովելը:

Երեխային երջանիկ տեսնելու ակնկալիքով հարկավոր է մանկավարժա-հոգեբանական գիտելիքներ հաղորդել նաև ծնողներին՝ ապահովելով վերջիններիս դպրոցի կյանքին առավել ակտիվ մասնակցությունը:

Ընտանիք-դպրոց կապը ոչ ձևական, իսկապես իրական տեսնելու ակնկալիքով անհրաժեշտ է ծնողական ժողովների ժամանակ պարզել, թե ինչ ցանկություն ունի ծնողը. երեխայի դաստիարակության, նրա բնականոն աշխարհընկալման ձևավորման առումով որտե՞ղ է դժվարանում: Ի՞նչ հարցեր են հուզում այն ծնողին, ով միայնակ է մեծացնում երեխային: Ի՞նչ անել, որպեսզի երեխան, դեռ մանուկ հասակից չտառապի թերարժեքության բարդույթներով, տխուր չլինի, անվերջ ժպտա, զգա մանկության բերկրանքը:

Ծնողների հետ շփման նման միջավայրը փոխվստահության մթնոլորտ է ապահովում. ծնողն անկեղծ է, և այս դեպքում երեխայի զարգացումը, ինչն իրականացնում են երկուստեք, նույն ուղղվածությունն է ստանում, իսկ այնուհետև շարունակություն ստանում դպրոցում:

21-րդ դարի ազատ, անկախ երիտասարդ ծնողն սպասում է, որ իր համար ևս դպրոցը հաճելի վայր լինի, վերածվի ուսուցողական այնպիսի միջավայրի, ուր ինքը կստանա իրեն ևս հետաքրքրող հարցերի պատասխանները: Դա հնարավոր է իրականացնել միջոցառումների, ժողովների, ուսուցիչների հետ առանձին հանդիպումների ընթացքում: Մեր ժամանակներում թերևս փոքր ինչ հնացած է թվում ուսուցչի այցը երեխայի ընտանիքին: Սակայն կան բացառիկ դեպքեր, երբ՝

- Չափազանց մշուշոտ է թվում երեխայի ընտանիքի առօրյան ու անվստահելի է նրա դաստիարակությունը:
- Զգացվում է, որ կա բռնություն, ոտնահարվում են երեխայի իրավունքները;
- Ֆիզիկական պատիժ է կիրառվում;
- Երեխան մեծանում է վախի ու սարսափի մթնոլորտում;
- Ականատես է ծնողների վեճի ու կռվի՝ սոցիալական շատ խնդիրների պատճառով:

Նման դեպքերում երեխայի տուն այցելելն անհրաժեշտություն է ու պարտադիր: Դա առիթ է տալիս, որ երեխան ավելի մտերմանա ուսուցչի հետ, շփման դաշտն առավել ջերմանա և դառնա արդյունավետ:

Երեխայի հետագա դպրոցական հաջողությունը մեծ մասամբ պայմանավարված է այն պայմանով, թե որքանով պետք է ուշադիր լինեն ծնողները՝ լուծելու դաստիարակչական-ուսումնական խնդիրները: Ծնողներին պետք է ծանոթացնել այն խնդիրներին, որոնց լուծման շարունակությունն իրենք պետք է իրականացնեն՝ համագործակցելով ուսուցիչների հետ: Կարծում եմ, ծնող-դպրոց համագործակցությունը իրական և արդյունավետ կլինի, եթե հաճախակի կազմակերպվեն թեմատիկ ծնողական ժողովներ, մանկավարժները հանդես գան զեկուցումներով: Այս զեկուցումներն ու թեմատիկ հանդիպումները, իհարկե կիրականանան, եթե ուսուցիչը պատրաստված է, եթե գիտակցում է շարունակական ինքնակրթության, վերապատրաստումների, ինքնազարգացման անհրաժեշտությունն ու կարևորությունը: Ընտանիք-դպրոց կապը կարևոր է իրականացնել նաև ընդհանուր տեսանկյունից:

Մակարենկոն նշել է. ***« ... ընտանիքը դաստիարակում է՝ ինչպես կարող է: Մենք՝ մանկավարժներս, պետք է ուղղորդենք այդ գործընթացը»:***

Սակայն ուսուցիչը չի կարող վարչարարության ճանապարհն ընտրել: Կազմակերպված ժողովները, միջոցառումները, փորձի փոխանակումն ու հաղորդումը, ծնողական օրերը, տնային այցելությունները պետք է ոչ թե պարտադրանք լինեն այլ հետաքրքիր՝ ծնողների համար: «***Դաստիարակի գործունեության մեջ ոչ մի բան չպետք է լինի առանց դաստիարակության***»,- ասել է Աբովյանը:

Իմ կարծիքով՝ կրթսեր դպրոցական հասակի երեխաների ընտանիքում ոչ բնականոն հարաբերություններն ու սոցիալական պայմանների հետևանքով տան անդորրը խաթարված լինելը բացասաբար են ազդում դաստիարակության վրա. երեխան դառնում է չար, օգտագործում վատ բառեր, դառնում ագրեսիվ, լուռ, տխուր ու անտարբեր: Նորից հիշենք Աբովյանին. «**Ինչ վատ բնություն, որ մարդ երեխա ժամանակ է սովորում, նրան մեծության ժամանակ էլ ճար չի ընկիլ**» Սա չէ՞ արդյոք պատճառը, որ հետագայում դա սխալմամբ որակում ենք որպես գենետիկ, ժառանգական խնդիր: Ծնողը պետք է մեր օգնությամբ գիտակցի, որ դաստիարակություն ասվածը հատուկ բանաձև չունի, այլ դա երեխայի տեսածն է ընտանիքում. Ինչպես են վերաբերվում միմյանց ծնողները, տանը մեծերը, ինչպիսի ուշադրություն են տածում միմյանց հանդեպ, ինչպիսին էն տան կենցաղը, մաքրությունը, ապրելակերպը... Ահա այս իրավիճակում էլ սովորում ու մեծանում է երեխան: Ինչպես ասել է ռուս մեծ ուսուցիչ Սուխոմլինսկին. «***Ընտանիքում արմատներ են գցվում, որոնցից հետո աճում են ճյուղեր, ծաղիկներ և պտուղներ: Դպրոցի մանկավարժական իմաստությունը կառուցված է ընտանիքի բարոյական առողջության վրա***»:

Մեր օրերում տեխնիկայի զարգացման շնորհիվ առավել լայն ու բազմազան կարող է լինել ծնողի ներգրավվածությունը և մասնակցությունը սովորողի կրթության կազմակերպման և դաստիարակության գործընթացներում: Ուստի բոլոր ուսուցիչներիս նպատակն է զարգացնել և կատարելագործել ուսուցչի և սովորողի ծնողի միջև կրթության կազմակերպման, դաստիարակության, արտադասարանական միջոցառումներում ներգրավվածության, համագործակցության ձևերն ու որակները:

Ուսուցիչ-ծնող համագործակցության նպատակներն են.

- Գտնել ընտանիքի մեջ այն հնարավորությունները, որոնք դրական ազդեցություն կունենան սովորողի վրա
- Բարձրացնել ծնողների մանկավարժական կուլտուրան
- Ներգրավել ծնողներին ակտիվ մասնակցելու ուսումնադաստիարակչական աշխատանքներին:

Ծնողներին դպրոցական կյանքին մասնակից դարձնելը ունի շատ դժվարություններ ու խնդիրներ: Հետազոտական աշխատանքիս խնդիրն է ուսումնասիրել և բացահայտել ուսուցչի և սովորողի ծնողի փոխադարձ համագործակցության ընթացքում առաջացող դժվարությունները, առաջարկել նոր լուծումներ, որովհետև հաճախ են ծնողները ստանձնում միայն դիտորդի դերը: Շատ ճկուն ու հմուտ պետք է լինի մանկավարժը, որպեսզի կարողանա ծնողին դարձնել իր խորհրդատուն, համախոհը և գործընկերը: Ակնհայտ է, որ կրթադաստիարակչական գործընթացի իրականացման գլխավոր մասնակիցները դպրոցն ու ընտանիքն են: Վարքով ու հատկապես կարգապահությամբ է պայմանավորված սոցիալական միջավայրում իր տեղն ու դերը գտնելու,վերջիններս արդյունավետորեն արժևորելու փաստը:Այդ հարցում անփոխարինելի է կրթօջախների դերը: Ուստի սովորողին ուսումնասիրելիս ուսուցիչներն ուշադրություն են դարձնում դասարանում «փոքրիկ հասարակության» մեջ, դրսևորած վարքին ու կարգապահությանը:

Սրանցով է պայամանավորված սովորողների ունեցած ընդունակությունների բացահայտումն ու զարգացումը և իհարկե նաև կարողունակությունների աստիճանական կատարելագործումը: Հենց այս հարցերում է, որ պետք է պահպանել ուսուցիչ-ծնող սերտ կապը, որպեսզի սովորողը հասնի ուսումնական առաջադիմության առավելագույնին:

## ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Հետազոտության արդիականության համար հիմք է հանդիսացել կյանքի՝ մարտահրավերներով լի ժամամանակակից շրաջափուլում սովորողի կրթական կարիքների ապահովման շրջանակներում ծնող - ուսուցիչ հաստատուն կապի անհրաժեշտությունը, որն ունակ է մեծապես ազդել սովորողի ուսումնառության որակի բարձրացման վրա: Մեծաքանակ աշակերտներով դասարաններում ժամանակի սղության պատճառով հնարավոր չի լինում անհրաժեշտ ուշադրություն դարձնել, բավարար րոպեներ տրամադրել այս կամ այն աշակերտի գիտելիքների հիմնովին ստուգմանը՝ անկախ նրա առաջադիմությունից, ակտիվությունից և այլնից...

Առաջին պլան է մղվում ուսուցիչ - ծնող փոխհամագործակցությունը՝ միասնական ուժերով վատթարագույն տարաբնույթ երևույթները արմատախիլ անելու և, գոնե, դրական անհրաժեշտ նվազագույնը սերմանելու նպատակով

## ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ

- Ցույց տալ ծնող - ուսուցիչ արդյունավետ փոխգործակցության դրական ազդեցությունը սովորողի կրթության ու դաստիարակության գործընթացում:
- Ներգրավել ծնողին դպրոցական գործընթացին, համագործակցել ուսումնադաստիարակչական աշխատանքների կազմակերպման ժամանակ, ներգրավել դասարանական, համադպրոցական, արտադասարանական միջոցառումներին:
- Ինչպե՞ս ներգրավել ծնողներին իրենց երեխաների կրթությանը վերաբերող հարցերի մասին որոշումներ կայացնելու գործին
- Ինչպե՞ս ներգրավել ծնողներին միջին և ավագ դպրոցներում ուսումնադաստիարակչա կան խնդիրների լուծման պրոցեսին:

Հին դպրոցական աֆորիզմում ասվում է. «**Երեխաների հետ աշխատելու ամենադժվարը նրանց ծնողների հետ աշխատելն է**»:|

## ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐԸ

- Ինչպե՞ս ներգրավել ծնողներին միջին և ավագ դպրոցներում ուսումնադաստիարակչա կան խնդիրների լուծման պրոցեսին:
- Ինչպե՞ս ներգրավել ծնողներին իրենց երեխաների կրթությանը վերաբերող հարցերի մասին որոշումներ կայացնելու գործին:

# ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ

Հայ ժողովրդի համար ընտանիքը սրբություն է, ավանդույթների, սովորությունների, մշակույթի, դաստիարակության և այլ բազմաթիվ հատկանիշների կրողն ու փոխանցողը: Այն երեխայի կյանքում հասարակական առաջին աստիճանն է և մեծ տեղ ու դեր է զբաղեցնում նրա դաստիարակման,կայացման հարցում: Ընտանեական դաստիարակությունը շարունակական է, որի դերի բարձրացումը ավելի շատ կախված է դպրոցից: Ընտանիքի և դպրոցի համագործակցության կենտրոնում սովորողն է, ով իր կրթության և զարգացման գլխավոր դերակատարն է թե՛ դպրոցում, և թե՛ ընտանիքում: Եթե դպրոցն ու ծնողները հաջողությամբ համագործակցում են, ինչն իր հերթին հանդիսանում է սովորողի կրթվելու և զարգանալու վճռորոշ տարր,ապա հաղթանակն ապահովված է:

Ընտանիքը, որպես կրթական կոլեկտիվ, ունի մի շարք առանձնահատկություններ: Առաջին հերթին այն կոլեկտիվ է՝ միավորված ոչ միայն ընդհանուր նպատակով, այլև ազգակցական կապերով: Ծնողական զգացմունքները, ծնողական սերը մի տեսակ կատալիզատոր են, որն արագացնում է անձի զարգացումը: Սա համեմատաբար կայուն թիմ է, որտեղ շփումը տեղի է ունենում անընդհատ, հնարավոր ամենալայն տարածքներում, տարբեր գործողություններում:

Ընտանիքը կոչված է ապահովելու երեխայի կյանքի ողջամիտ կազմակերպումը, օգնելու յուրացնել ավագ սերունդների կյանքի և աշխատանքի դրական փորձը, կուտակել գործունեության, սովորությունների, հարաբերությունների արժեքավոր անհատական փորձ: Ծնողների հետ փոխգործակցությունը դպրոցի և յուրաքանչյուր ուսուցչի աշխատանքում հրատապ և բարդ խնդիրներից է:

Ընտանիքում է դրվում և ապահովվում անհատականության կարևորագույն գծերի դաստիարակությունը: Դրանում սովորողը ստանում է աշխարհի մասին առաջին պատկերացումները, այստեղ ձևավորվում է հասկացությունների, հայացքների զգացմունքների, սովորությունների ֆոնդը, որն ընկած է անհատի բարոյական ձևավորման հիմքում: Միայն ընտանիքում է հնարավոր ստեղծել և վերարտադրել իսկապես ազգակցական հարաբերությունների մշակույթ, տիրապետել սոցիալական կարևորագույն դերերին, ձևավորել մշակույթ, հարստացնել բարոյական փորձը:

Երկկողմանի համագործակցության շնորհիվ կարելի է սովորողի համար ապահովել այնպիսի կրթական միջավայր, որտեղ վերջինս իրեն կզգա պաշտպանված ու կարևոր:

Ծնող - ուսուցիչ համագործակցությունն իր դրական ազդեցությունն է ունենում սովորողի առաջադիմության, արժեհամակարգի ձևավորման, հաջողություններ և հաղթանակներ ունենալու վրա:

Ծնող - ուսուցիչ կապի պահպանումը ուսումնական գործընթացում աշակերտի հաջողության բանալին է, իսկ ծնողների և դպրոցի միջև կապի բացակայությունը, ինչպես նաև դպրոցի ու ծնողների չհամաձայնեցված գործողությունները վնասում են երեխայի կրթությանն ու դաստիարակությանը:

Ուսուցիչը պետք է լինի պոզիտիվ, առանց բացառությունների, պետք է յուրաքանչյուր սովորողի ծնողին՝ ուղարկի տեղեկատվություն.օրինակ՝ ի՞նչ զարմանալի կամ գովելի բան է արել երեխան դասի ժամանակ: Ամենափոքրիկ բանն անգամ կարող է մեծ փոփոխություն մտցնել:Ամենափոքրիկ գովասանքն անգամ մեծ ոգևորություն և պատասխանատվություն է առաջացնում թե՛ ծնողի, և՛թե սովորողի մոտ: Այս կապն է, որ հանդիսանում է ուսուցման կազմակերպման բարելավման շարունակական ֆակտոր: Ժամանակակից զարգացած տեխնոլոգիական միջոցներով հաղորդակցումը խնայում է ուսուցչի և ծնողի համար և՛ ժամանակը, և՛ տարածությունը: Եթե ծնողը ժամանակի սղության պատճառով չի կարողանում հաճախել դպրոց, ապա նման ծնողի հետ ուսուցիչը պարտադիր պետք է անընդհատ կապի մեջ լինի, էլեկտրոնային նամակների տեսքով անհատական տեղեկատվություն հաղորդի երեխայի մասին:

Խնայելով ժամանակը և տարածությունը, կարելի է ծնողական ժողով հրավիրելուց առաջ որևէ սոցիալական հարթակում քննարկել ծնողների հետ ժողովի թեման,նպատակները, դրա կարևորությունն ու հրատապությունը:

Նման հարթակներում ուսուցիչը կարող է տեղադրել որևէ բաց դասի տեսագրություն, որի մեջ յուրաքանչյուր ծնող կարող է տեսնել, թե ինչպե՞ս է իր երեխան իրեն դրսևորում դասի ժամանակ: Կարելի է նաև այդ նույն դասի տեսանյութը քննարկել նույն հարթակում և կատարել եզրակացություններ: Կարելի է նաև ծնողների համաձայնությամբ դասի տեսագրությունը տեղադրել համացանցում:

Շատ կարևոր է, որ ծնողները ևս տեղյակ լինեն դպրոցական անցուդարձին, հետաքրքրվեն թե մասնագիտական կողմնորոշմանն ուղղված ինչպիսի՞ միջոցառումներ են անցկացվելու դպրոցում, երեխայի հետ քննարկեն ծագած խնդիրները, նրբանկատ ձևով չպարտադրված խորհուրդներ տան երեխաներին՝ կարևոր որոշումներ ընդունելիս իրենց օգնությունն առաջարկեն: Պետք չէ անտեսել մասնագիտական կողմնորոշման հարցում նաև սովորողի հասակակիցների ազդեցությունը: Տարիքային առանձնահատկություններով պայմանավորված՝ դեռահասներից շատերի համար ընկերների կարծիքն ավելի մեծ կշիռ ունի, քան ծնողներինը և ուսուցիչներինը: Այդ իսկ պատճառով խորհուրդ է տրվում հաշվի առնել սովորողի ընտրության հարցում ընկերների ազդեցության գործոնը և այն, թե որքանով կարող է այդ ազդեցությունը դրական լինել: Ամեն դեպքում պետք է նրբանկատ լինել, որպեսզի ակնհայտ բացասաբար չարտահայտվենք ընկերների մասին: Ժողովի արդյունքների ամփոփումից հետո դասղեկը ևս մեկ անգամ կարևորում է քննարկվող խնդիրը, նշելով, որ այդ հարցերի շուրջ քննարկումները կշարունակվեն մինչև ուսումնական տարվա ավարտը: Դասղեկը ծնողներին խնդրում է իրեն օգնել՝ աշակերտների հետ տարբեր մասնագետների հետ կազմակերպել հանդիպումներ, ինչպես նաև տարբեր կազմակերպություններ այցելություններ:

Սովորողի դաստիարակության գործընթացում համար մեկ ազդեցիկ ուժը՝ սեփական օրինակն է, թե՛ ուսուցչի, թե՛ ծնողի:

Կրթության կազմակերպման հարցում ծնողների ակտիվ մասնակցությունն ապահովելու համար առաջարկում եմ թույլ տալ, որ ծնողները մասնակից դառնան դասավանդմանը՝ օգտագործելով իրենց մասնագիտական գիտելիքները և նախօրոք ծանոթանալով սովորողի ուսումնական նյութին: Իրենց ծնողներին տեսնելով ներգրավված և համագործակցելիս՝ սովորողներն ավելի են խրախուսվում և ոգևորվում, ընտանիքի և դպրոցի բարեկամական հարաբերություններից:

Ուսումնասիրելով ծնողական ժողովների դերն ու կարևորությունը ուսուցիչ-ծնող փոխադարձ համագործակցության տեսանկյունից շատ կարևոր է, որ ծնողական ժողովները պարտադիր կազմակերպվեն նախապես մշակված պլանով, որը պետք է հետաքրքիր արդիական լինի ծնողների համար: Դասղեկը կամ մանկավարժը պետք է ունենա հստակ նպատակ, ներկայացնի խնդիրները, որոնք որ պետք է լուծվեն համատեղ ուժերով՝ անչափ կարևորելով ծնողի դերը: Կարելի է օգտվել նաև համակարգչային ցուցադրություններից՝ հատկապես որպես ծնողական ժողովի վերջնական ամփոփում:

Նշեմ մի քանի կանոններ, որոնք որ առաջարկում եմ կիրառել ծնողական ժողովների ժամանակ.

- Ծնողական ժողովները պետք է հրավիրել ծնողներին հարմար և նրանց հետ համաձայնեցված ժամանակին;
- Ծնողական ժողովը պետք է լինի մանկավարժորեն լավ նախապատրաստված;
- Ծնողների և դասղեկի շփումը պետք է լինի անմիջական՝ էթիկայի կանոնների պահպանմամբ;
- Ծնողը պետք է համոզվի, որ դպրոցը պատրաստ է աջակցել իրեն՝ օգնելու իր երեխային;
- Դասղեկը պետք է լինի անաչառ, բարյացակամ և ունենա մանկավարժական տակտի զգացում:

Որպեսզի ծնողական ժողովը լինի արդյունավետ և ծառայի իր նպատակին, անհրաժեշտ է այն կազմակերպել երեք փուլով.

**1-ին փուլ - Նախապատրաստում.**

- ✓ Մասնակիցների կազմի ընտրություն
- ✓ Ժողովի նպատակի ընտրություն
- ✓ Իրազեկում

**2-րդ փուլ - Անցկացում.**

- ✓ Դասարանում տիրող սոցիալ-հոգեբանկան մթնոլորտի ներկայացում
- ✓ Դասարանի աշակերտների առաջադիմության վերլուծություն
- ✓ Կազմակերպչական աշխատանքների քննարկում

**3-րդ փուլ - Արդյունքների ամփոփում**

- ✓ Ճշտել ծնողների կարծիքը ժողովի մասին՝ նախօրոք նախապատրաստելով հարցաթերթիկներ, ծնողների գնահատականների, առաջարկությունների,հարցերի վերաբերյալ:
- ✓ Կատարել եզրակացություններ
- ✓ Կայացնել որոշումներ

Որպեսզի ուսուցիչ-ծնող-սովորող փոխադարձ համագործակցությունը ավելի մտերմիկ և ընկերական երանգ ստանա, կարելի է կազմակերպել համատեղ արշավներ, էքսկուրսիաներ կամ հանրօգուտ աշխատանքներ: Արդյունքում սովորողը միշտ կլինի ուշադրության կենտրոնում, կլինի կառավարելի: Ուսուցիչը կարող է նաև համագործակցության արդյունքում օգնել սովորողի ծնողին ցանկացած կոնֆլիկտային իրավիճակներում: Որոշակի խնդիրների առկայության դեպքում հեշտությամբ կլուծի իր առջև ծառացած խնդիրները:

Երկկողմանի համագործակցության շնորհիվ կարելի է սովորողի համար ապահովել այնպիսի կրթական միջավայր, որտեղ վերջինս իրեն կզգա պաշտպանված ու կարևոր: Ծնող-ուսուցիչ համագործակցությունն իր դրական ազդեցությունն է ունենում սովորողի առաջադիմության, արժեհամակարգի ձևավորման, հաջողություններ և հաղթանակներ ունենալու վրա:

«**Ծնողների ներգրավվածություն**» տերմինը նշանակում է միասնական և անընդմեջ պատասխանատվություն աշակերտի հաջողությունների և ուսման բարելավմանը ինչպես տանը, այնպես էլ դպրոցում: Այն միավորում է ծնողներին և ուսուցիչներին, որպեսզի նրանք միահամուռ ուժերով նպաստեն աշակերտի առաջադիմության բարելավմանը: Երբ ծնողը ներգրավված է զավակի կրթության գործընթացում, աշակերտն ունի ավելի բարձր առաջադիմություն, այդ նույն ժամանակ բարելավվում է հաճախման ցուցանիշը, սովորողի մոտ զարգանում է սոցիալական շատ կարևոր հմտություններ և նրա վարքը դրական է դառնում ինչպես տանը, այնպես էլ դպրոցում: Սրանք շատ կարևոր գործոններ են, որոնք ազդում են աշակերտի վրա ինչպես դպրոցում, այնպես էլ ապագա մասնագիտական գործունեության ընթացքում: Ծնողները տեղեկացված են լինում իրենց երեխաների կրթական կարիքների մասին և խրախուսում են ներգրավվելը:

Հաջողված է այն դասարանը, որի ղեկավարը հաճախակի հրավիրում է ծնողական ժողովներ, ներկայացնում է սովորողների առաջընթացի մասին, քննարկում սովորողի հետ կապված ցանկացած հիմնախնդիր: Ծնողական ժողովները մերձեցնում են ուսուցիչներին և ծնողներին, ընտանիքին մոտեցնում են դպրոցին, օգնում որոշել երեխայի կրթության վրա ազդելու ամենաօպտիմալ ուղիները: Հանդիպումների ժամանակ ծնողները համակարգված կերպով ծանոթանում են ընտանիքում և դպրոցում երեխաներին դաստիարակելու խնդիրներին, բովանդակությանը, ձևերին և մեթոդներին:

Ծնողական ժողովները կարող են կառուցվել տարբեր ձևերով:

**Խնդրահարույց հարցերի ժամանակ հենվել առավել կենսափորձ ունեցող ծնողների կյանքի և մանկավարժական փորձի, ծնողական կոմիտեի անդամների և դպրոցի խորհրդի կարծիքների վրա**: /Կ. Դ. Ուշինսկի/

**Ուսուցիչն է, որ կարող է ճիշտ ղեկավարելով աշակերտներին և ծնողներին , կկարողանա նրանց մեջ ձևավորել բարձր արժանիքներ, զարգացնել հետաքրքրությունը ուսման նկատմամբ**: /Կ. Դ. Ուշինսկի/

Շատ հաճախ ուսուցչի կամ ծնողի սխալ խոսելը, ոչ ճիշտ վարվելակերպը երեխաներին հետ է շպրտում և ստեղծվում է կոնֆլիկտային իրավիճակ, որն ավելի բարդացնում է ծնող-երեխա-մանակավարժ-դպրոց համագործակցությունը: Այդպիսի իրավիճակներից խուսափելու համար անհրաժեշտ է ճիշտ ծնողական ժողովներ վարել, որտեղ կկարողանանք կառուցողական մթնոլորտ ստեղծել և համատեղ աշխատանքի արդյունքում կշահի մեր սովորողը, վաղվա քաղաքացին:

Ծնողական ժողովները պետք է կազմակերպել հետևյալ սկզբունքներով՝

- Ժողովների ժամանակ որոշել մեկ առավել կարևոր խնդիր, որը վերաբերում է դասարանի աշակերտներին և դրա հիման վրա կազմակերպել զրույցը ծնողների հետ:
- Հատուկ ուշադրություն դարձնել դասարանում ծնողների աթոռների դասավորության վրա: Օրինակ, կարելի է սեղանները և աթոռները դասավորել շրջանաձև որպեսզի բոլոր ծնողները լավ տեսնեն և լսեն միմյանց:
- Ժողովի ընթացքում կիրառել խաղեր և ծնողների համագործակցության կազմակերպման խմբային ձևեր:

Ծնողական ժողովների ժամանակ դասղեկը պետք է դրսևորի հետևյալ վարքագիծը.

- Հանել սեփական լարվածությունը և տագնապը ծնողներին հանդիպելուց առաջ:
- Խոսքի, ինտոնացիայի, ժեստերի և այլ միջոցներով ցույց տալ հարգանք և ուշադրություն նրանց հանդեպ:.
- Փորձել հասկանալ ծնողներին, ճիշտ որոշել խնդիրները, որոնք առավել անհանգստացնում են նրանց:
- Ծնողների հետ հարկավոր է հանգիստ և բարեհամբույր խոսել:
- Կարևոր է, որ բոլոր աշակերտների, այդ թվում /ռիսկային խմբի/ ծնողները ժողովից գնան հավատով լցված դեպի իրենց երեխան: .
- Ծնողական ժողովի ընթացքում համատեղ աշխատանքի արդյունքը պետք է լինի այն, որ ծնողները դառնան ավելի վստահ այն բանում, որ իրենց երեխաների դաստիարակության հարցում կարող են հենվել դասղեկի և մյուս ուսուցիչների աջակցության և օգնության վրա: Եվ վերջապես ուսուցչի վարպետությունը կայանում է աշակերտների հետ փոխազդեցության կազմակերպման ձևերը, վերլուծելու կարողությունը, համոզմունքների արտահայտումը, առանց վիրավորելու աշակերտի տեսակետը, աշակերտի ներշնչման կարողությունը:

**Ուսուցիչն է, որ կարող է ճիշտ ղեկավարելով աշակերտներին և ծնողներին , կկարողանա նրանց մեջ ձևավորել բարձր արժանիքներ, զարգացնել հետաքրքրությունը ուսման նկատմամբ**: /Կ. Դ. Ուշինսկի

Ինչպես ասել է Սուխոմլինսկին «**Յուրաքանչյուր երեխայի մեջ կա լավը, և դաստիարակության գործընթացը պետք է կառուցել դրականի վրա հենվելու սկզբունքի հիման վրա**»:

Եվ վերջապես ուսուցչի վարպետությունը կայանում է աշակերտների հետ փոխազդեցության կազմակերպման ձևերը, վերլուծելու կարողությունը, համոզմունքների արտահայտումը, առանց վիրավորելու աշակերտի տեսակետը, աշակերտի ներշնչման կարողությունը: Ուսուցչի մոտեցումից շատ բան է կախված:

# ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ծնող-դպրոց համագործակցության արդյունքները վերանայելով, կատարեցի հետևյալ դիտարկումները:

- Կողմերի համագործակցությունը պետք է հիմնված լինի մարդկային բարձր ու բարոյական որակների վրա:
- Ուսուցչի, սովորողի ծնողի կամ նրա օրինական ներկայացուցչի համագործակցությունը բավականին պատասխանատու և կարևոր գործընթաց է:
- Կողմերը պետք է քաջ գիտակցեն, որ իրենց համագործակցության հիմքում կրթության առաջնային շահերի՝ սովորողների սովորելու իրավունքի իրականացումն է:
- Հաճախակի ծնողական ժողովներ իրականացնել, որպեսզի հնարավոր լինի մշտադիտարկել կրթական հնարավոր խնդիրներն ու սովորողների՝ տարիքային առանձնահատկություններով պայմանավորված վարքային շեղումները:
- Ծնողների մեջ ևս ստեղծել բարոյահոգեբանական կայուն ու առողջ միջավայր:
- Կարևոր հանգամանք է նաև մանկավարժական խորհրդատվությունը ծնողին:
- Կողմերի արդյունավետ աշխատանքն ուղիղ համեմատական է արժեքային համակարգ ունեցող, դաստիարակված ու գիտակից անձնավորության ձևավորմանը:.
- Ծնողներին վստահություն տալ, որ որակյալ ուսուցիչները կսովորեցնեն և կկրթեն իրենց երեխաներին և որ դրա համար կան բոլոր անհրաժեշտ պայմանները:

Լև Տոլստոյն ասել է. «**Ամենաննշան մանրուքներն անգամ օժանդակում են երեխայի բնավորության և էության կազմավորմանը»:** Եթե ծնողներն ու մանկավարժները հասկանան, որ ուսուցման ու դաստիարակության մեջ չկան մանրուքներ, ապա հենց համագործակցային աշխատանքի շնորհիվ էլ կիրականացնեն մի մեծ արաքելություն՝ երեխայի համար ժպտուն, պայծառ առօրյայի ապահովումն ու լիարժեք մարդ ձևավորելու վեհ գործը:

«ԱՐՄԱՎԻՐ 1» ՎԿ

# ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ


1. Կ.Դ .Ուշինսկի
2. Ա.Ս.Մակարենկո
3. Վ.Ա.Սուխոմլինսկի
4. Նախաշավիղ 5 .2016
5. http://kargiskola.ge/parent/pdf/PE_GUIDE_Armenian.pdf